

ՊԱՏՐԻԱՐԲ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ

Ա.- Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ԵՒ ԱՄՄԱՆ

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը ԵՂ. 30 Յունիսին մեկնեցաւ դէպի Էջմիածին, Բարիզի գամբով: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հետ տեսակցութիւններ ունեցաւ Երեւանի բնակարանին մէջ ուր ֆիզիքական իր առողջութեան պատճառով կը մնար բժիշկներու խնամքին ենթակայ: Նոյնպէս տեսակցութիւն ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահի՝ Լեւոն Տէր Պետրոսեանի եւ փոխ նախագահ Գագիկ Յարութիւնեանի, Արտաֆին Գործոց եւ Լուսաւորութեան նախարարներու, Պետական Համալսարանի Տնօրէնի եւ կրթական բաժանմունքներու վարիչներու հետ, Երուսաղէմի Պատրիարքութեան եւ Ժառանգաւորաց Վարժարանի կապակցութեամբ հարցերու մասին: Հանդիպումներ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Վեհափառ Կաթողիկոսին հետ, որ նոյնպէս այցելութեամբ Էջմիածին կը գտնուէր:

Վերադարձի գամբուն վրայ, Պատրիարք Սրբազան Հայրը Բարիզէն անցաւ Ամսթերտամ Յուլիս 12ին ուր հանդիպումներ ունեցաւ Գեր. Տ. Վիգէն Եպս. Այգազեանի, Հոգ. Տ. Նուրհան Մ. Վրդ. Մանուկեանի (Նիւ Եօրէն), Հոլանտայի Հոգեւոր Հովիւ Հոգ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեանի, եկեղեցական խորհուրդի անդամներուն եւ հայ ընտանիքներու հետ, խորհրդակցելով համայնֆային եկեղեցական կեանքի կազմակերպման եւ գործունէութեան մասին:

Յուլիս 15ին Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Նուրհան Մ. Վրդ. Մանուկեանի, Ամման մեկնեցաւ, ուր նախագահեց Տեղական Խորհուրդի երկու նիստերուն, տեսակցութիւն ունեցաւ

տեղական կազմակերպութեան ցնեկայացուցիչներու հետ, կիրակի առաւօտուն մասնակցեցաւ եւ քարոզեց Ս. Պատարագին, զոր մատոյց Պատրիարքի Փոխանորդ Յորդանանի մէջ՝ Գեր. Տ. Վահան Եպս. Թօփալեան: Երեւոյթքի, Յուլիս 19ին, Պատրիարք Սրբազան Հայրը առիթ ունեցաւ այցելելու Փիթրայի հնագիտական տեսարժան վայրերը, Գեր. Տ. Վահան Սրբազանի ընկերակցութեամբ: Հոգ. Տ. Նուրհան Մ. Վրդ. Մանուկեան վերադարձաւ Նիւ Եօրէ, իսկ Պատրիարք Սրբազան Հայրը, Յուլիս 20ին, Ամմանէն Երուսաղէմ վերադարձաւ Կիպրոսի վրայով: Լառնաֆայի օդակայանը զինքն ղիմաւորեցին Հոգեւոր Հովիւ Տ. Քինյ. Աշգարեան եւ եկեղեցական Խորհուրդի Ատենապետը՝ իր տիկնոջ հետ: Այցելելէն յետոյ Լառնաֆայի կոկիկ եկեղեցին եւ նոյն հողամասին վրայ կառուցուող դպրոցի գեղակերտ շէնքը, հիւրընկալներու ինքնաշարժով, Պատրիարք Սրբազանը այցելեց Նիկոսիա, տեսաւ Մելգոնեան Վարժարանի նորակառոյց շէնքերը որոնք չկային 1960ին երբ, դեռ վարդապետ, առաջին անգամ այցելած էր ինք: Նիկոսիոյ Առաջնորդարանին մէջ (Կաթողիկոսական Փոխանորդ Հոգ. Տ. Նդիշէ Մ. Վրդ. Մանուկեանի երկրէն բացակայութեան) հանդիպեցաւ Տ. Վազգէն Ա. Քինյ. Սանտրունիին, որուն հետ իրենց ծանօթութիւնը Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի օրերէն (1940ի սերունդէն), յիշատակներու շարան մը վերապրիլ տուաւ: Միասին այցելեցին եկեղեցին, վարժարանի շրջափակը, ապա Հայ Տարեցներու Տունը, Հայկական Ակումբը ուր տարեցներ եւ երիտասարդներ զբաղուած էին ժամանցի խաղերով, իսկ մտաւորականներու խումբ մը

ընթերցասնեակին մէջ՝ ընթերցումով և «ազգային հրատապ հարցերով»: Քաղաքին մէջ տեսարժան քանի մը վայրեր տեսնելէ

յետոյ, Պատրիարք Սրբազան Հայրը Հառնափայի օղակայանին մէջ հրաժեշտ տուաւ հիւրընկալ երկու Քահանայ Հայրերուն:

Բ.- ԱՅՑ ԷԶՄԻԱՇԻՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՎԱԶԳԷՆ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐԻԹԵԱՆ

17 Օգոստոս 1994, Չորեքշաբթի առաւօտեան ժամը Յին, ստացանք գոյժը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Նորին Ս. Օծուքին Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանումին: Հեռատիպով Գեր. Տ. Յուսիկ Արք. Սանթուրեան, Լուսարարապետ և երիցագոյն անդամ Մայր Աթոռոյ կը յայտնէր վախճանումը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, և կը հրաւիրէր Հայց. Առաքելական Եկեղեցւոյ համայն եպիսկոպոսները Սուրբ Էջմիածին, Օգոստոս 24ին գումարուելիք նիստին մէջ ընտրելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահը:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի, նաեւ Երուսաղիմաբնակ եպիսկոպոս Միաբաններէն Կիրեղ, Վահան, և Սեւան Սրբազանները, Բարիք-Երեւան քույրով, Օգոստոս 24ին ժամանեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին: 1994 Օգոստոս 25ին, Վեհաբանի մէջ տեղի ունեցաւ միատեղ նիստը Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի և Սուրբ Էջմիածին ժամանած և ներկայ գտնուող և Մայր Աթոռի միաբան բոլոր եպիսկոպոսներուն: Ներկայ էին 39 անձեր՝ Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ երկու Պատրիարք Սրբազանները, երեսուն երեք եպիսկոպոսներ և Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի չորս աշխարհական անդամներ:

Ժողովին միակ օրակարգն էր ընտրութիւն Կաթողիկոսական Տեղապահի: Երկու Պատրիարքներու Ատենապետութեամբ և Գանատայի Հայց. Եկեղեցւոյ Քեմի Առաջնորդ Գեր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Գեր. Տ. Ասողիկ Եպս. Արիստակէսեանի ատենադպրութեամբ, ժողովը գաղտնի քուէարկութեամբ Կաթողիկոսական Տեղապահ ընտրեց Երուսաղէմի Պատրիարք Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանը:

Օգոստոս 26, Ուրբաթ առաւօտէն մինչեւ Օգոստոս 28, Կիրակի, տեղի ունեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. հանգուցեալ Վեհափառ Հայրապետին և Ամենայն Հայոց Կաթողիկոսի յուղարկաւորութեան արարողութիւնները: (Մանրամասնութիւնները տեսնել «Սիոնի» այս թիւին առաջին տասնըհինգ էջերուն մէջ):

Տեղապահ Պատրիարք Սրբազանը Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի հետ առաջին նիստը գումարեց Օգոստոս 29, Երկուշաբթի առաւօտուն, և նկատի առին կարելի մանրամասնութիւնները, որոնք կապուած են Ազգային Եկեղեցական ժողովը գումարելու գործողութեանց և հրահանգներու հետ: Երկրորդ նիստը գումարուեցաւ հանգուցեալ Վեհափառ Հայրապետի «Քառասունքի Հոգեհանգստեան» Պատարագէն,

և գերեզմանին վրայ հաստատուած մարմարէ տապանաճառի կնքումէն (Հոկտեմբեր 2) յետոյ, Երկուշաբթի, Հոկտեմբեր 3ին:

Երկրորդ նիստի խորհրդակցութեանց ի հետեւանս, Տեղապահ Պատրիարք Սրբազանը բոլոր բեմերուն եւ եպիսկոպոսներուն յղուած 10 Հոկտեմբեր թուակիր նամակով հաղորդեց Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նիստին մէջ տրուած որոշումները:

Ըստ այնմ, հետեւեալը կը հաղորդուէր. —

«Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի 1994 Հոկտեմբեր 3 նիստին մէջ նկատի առնմբ Ազգային եկեղեցական ժողով գումարելու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու ամմիջական հարցերը: Ներկայ էին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի բոլոր հոգեւորական եւ աշխարհական անդամները, Ամենապատուութեամբ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Տ. Գարեգին Արք. Գազաննեանի:

1.— Սոյն նիստին մէջ որոշեցինմ Ազգային եկեղեցական ժողովը գումարել 1995 Ապրիլ ամսուան առաջին շաբաթուան ընթացքին:

2.— Ազգային եկեղեցական ժողովի կազմակերպական աշխատանքները յառաջ տանելու համար հաստատեցինմ առանձին գրասենեակ եւ որպէս պատասխանատու անձ նշանակեցինմ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանը, Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Հայց. եկեղեցւոյ Արեւմտեան Թեմին:

3.— Կը հրահանգենմ Հայաստանեայց եկեղեցւոյ բոլոր բեմական առաջնորդներուն, բեմական խորհուրդներուն եւ համայնքներուն, գործակցիլ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին, գործադրելով իր թելադրութիւնները եւ պահանջները, լաւագոյնս եւ օրինաւոր հիմքերու վրայ

դնելու համար Ազգային եկեղեցական ժողովի գումարումը եւ գործունէութիւնը:

4.— Ներկակ ձեզի կ'ուղարկենմ ընդհանուր տեղեկութիւններ պահանջող եւ անհրաժեշտ հարցարանը: Հանցեմ ամմիջապէս պատասխանել հարցարանին, մինչեւ 1994 Նոյեմբեր 10:

5.— Հայաստանի եւ նախկին Սովետ Հանրապետութեանց մէջ գտնուող բեմերը թող հանին իրենց պատասխանները ուղարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասցեով, ուղղեալ Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի անունին:

6.— Արտասահմանի մնացեալ բեմերը թող հանին իրենց պատասխանները ուղարկել Վաչէ Սրբազանի ներքեւի հասցէին:

Սիրոյ Ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Կաթողիկոսական Տեղապահ»

Տեղապահ Պատրիարք Սրբազան Հայրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ գտնուած միջոցին զբաղուած է տնտեսական եւ վարչական ամենօրեայ հարցերով, պահելով կրօնական, պետական եւ այլ հաստատութեանց հետ փոխ-յարաբերութիւնները:

Հոկտեմբեր 16ին Տեղապահ Պատրիարք Սրբազանը ժամանեց Երուսաղէմ, եւ Նոյեմբեր 10ին վերադարձաւ Էջմիածին, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Նոյեմբեր 17ի նիստին մէջ նկատի առնելու համար բեմերէն ստացուած տեղեկատուութիւնները եւ հետապնդելու Ազգային եկեղեցական ժողովի գումարման գործողութիւնները: